ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Ակունք, Կենտրոնական խճուղի 72, akunq.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2023թվականի N 14

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐ ՀԱՆՈՒՆ ԿԼԻՄԱՅԻ ԵՎ ԷՆԵՐԳԻԱՅԻ» ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԿՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԱՆԱԼԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով,առաջնորդվելով Եվրոպական միության կողմից իրականացվող «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի» նախաձեռնության դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի միանալը Եվրոպական միության կողմից նախաձեռնված և իրականացվող «Քաղաքապետերի դաշնագիր հանուն կլիմայի և էներգիայի»նախաձեռնությանը:

2.Սույն որոշման ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում, Եվրոպական Հանձնաժողովի «Քաղաքապետերի դաշնագիր՝ Արևելք» տարածաշրջանային ծրագրի և այլ գործընկերների աջակցությամբ, Դաշնագրի շրջանակներում մշակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագիրը (Sustainable Energy and Climate Action Plan), որում կամփոփվեն մինչև 2030թ. համայնքի թիրախային բնագավառներում ջերմոցային գազերի արտանետումներն առնվազն 35%-ով նվազեցման, ինչպես նաև համայնքի կլիմայի փոփոխության հանդեպ դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունները և միջոցառումները:

3.Մինչև 2024թվականը նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ակունք համայնքի Կայուն էներգետիկ զարգացման և կլիմայի պահպանության գործողությունների ծրագրի մշակման պատասխանատու էներգետիկ կառավարիչ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -13 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԶԻԶՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՄԱՐՋԱՆԻԿ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԼԵՎՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԳՈՀԱՐ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԵՂԻԱԶԱՐ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱՐԱՔՍԻ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՐԻԿ

ՌՈՒԲԵՆՅԱՆ ՀՈՒՆԱՆ

ՍԱՖԱՐՅԱՆ ԳՈՌ

ՍԵԴՐԱԿՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՒԲԵՆՅԱՆ